



Հայ-թուրքական հարաբերությունների բարելավմանն ուղղված «Բաց դռների»  
դրամաշնորհային սխեմայով  
տրամադրված դրամաշնորհների մասին ամփոփ զեկույց

«Բաց դռների» մեխանիզմն իրենից ներկայացնում է ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը» ծրագրի մի մաս: Այն համատեղ իրականացվում է կազմակերպությունների կոնսորցիումի կողմից, որի կազմում ընդգրկված են Եվրասիա համագործակցություն հիմնադրամը, Երևանի մամուլի ակումբը, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միությունը, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը և Թուրք-հայկական բիզնես զարգացման խորհուրդը: Մեխանիզմը կաջակցի նորարար և (կամ) պիլոտային գաղափարներին, որոնք կոչված են աջակցել Հայաստան-Թուրքիա երկխոսությանը, մեծացնել այդ երկխոսությունում մասնակցող կազմակերպությունների թիվը, ինչպես նաև անդրադառնալ հարցերի, որոնք մինչ այդ դուրս էին մնացել ծրագրի շրջանակից:

Ստորև ներկայացվում են հաստատված ծրագրերը և դրանց համառոտ նկարագիրը:

1. Կազմակերպություն՝ «Գյումրու զարգացման հիմնադրամ» ՀԿ  
Ծրագրի անվանում՝ Գյումրի-Կարս տնտեսական համաժողով  
Ծրագրի ղեկավար՝ Անուշ Մկրտչյան  
Ընդհանուր բյուջեն՝ 19,927 ԱՄՆ դոլար  
Տևողություն՝ 2011թ. օգոստոսի 1 – նոյեմբերի 30 (4 ամիս)

Ծրագրի նպատակն է տարածաշրջանային գործարար համաժողովի ստեղծման միջոցով աջակցել Հայաստանի և Արևելյան Թուրքիայի միջև առևտրի և բիզնեսի զարգացմանը՝ ստեղծելով փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկման, պայմանագրերի կնքման և գործարար համագործակցությունների հաստատման հնարավորություններ: Որպես ծրագրի մաս՝ շնորհառուն՝ «Գյումրու զարգացման հիմնադրամ» ՀԿ-ը, կզարգացնի նախկինում ձեռք բերված փորձը և 2011թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին կկազմակերպի Գյումրի-Կարս տնտեսական երկրորդ համաժողովը Կարսում (Թուրքիա): Համաժողովին կմասնակցեն մոտավորապես 40 հայ և թուրք գործարարներ, տարածաշրջանային փորձագետներ, որոնք կքննարկեն համատեղ գործարար ծրագրերի մշակման և իրականացման հեռանկարները, մասնավորապես՝ Հայաստան-Թուրքիա տնտեսական հարաբերությունների շրջանակում: Համաժողովը կտևի 3 օր, որի ընթացքում կքննարկվի հարցերի լայն շրջանակ, ինչպիսիք են, օրինակ՝ Հայաստան-Թուրքիա սահմանի բացումը և տնտեսական օգուտները տարածաշրջանի համար, Հարավային Կովկասի ընդհանուր տնտեսական շուկան, կովկասյան ապրանքանշանները՝ որպես խաղաղության կառուցման գործիքներ, ինչպես նաև մի շարք հատուկ թեմաներ՝ ներառյալ կաթի վերամշակման, մեղվաբուծության, մեղրի արտադրության, բուժական խոտաբույսերի, կովկասյան թեյատեսակների և համատեղ այլ արտադրությունների ստեղծման հեռանկարներ: Ակնկալվում է, որ ծրագրի արդյունքում կընդլայնվեն սննդի

արտադրության և վերամշակման ոլորտում ներգրավված Հայաստանի և Թուրքիայի ձեռնարկատերերի ու ընկերությունների միջև համագործակցության և համատեղ գործարար ծրագրերի իրականացման հնարավորությունները:

2. Կազմակերպություն՝ Ռուլան Բիկովի անվան «Կինոյի և հեռուստատեսության զարգացման հայկական հիմնադրամ երեխաների և պատանիների համար»  
Ծրագրի անվանում՝ Մանկապատանեկան ֆիլմերի 7-րդ միջազգային ֆառատոն  
Ծրագրի ղեկավար՝ Նունե Մանուկյան  
Ընդհանուր բյուջեն՝ \$19,858 ԱՄՆ դոլար  
Տևողություն՝ 2011թ. օգոստոսի 1-ից մինչև հոկտեմբերի 31 (3 ամիս)

Ծրագրի նպատակն է խթանել Հայաստանի և Թուրքիայի հասարակությունների միջև մշակութային երկխոսությունը՝ հայ և թուրք պատանիների ու երիտասարդների, ինչպես նաև կինոարտադրողների միջև մասնագիտական փորձի փոխանակումների և երկկողմ ծրագրերի իրականացման միջոցով: 2011թ-ի հոկտեմբերին Երևանում կայանալիք մանկապատանեկան ֆիլմերի 7-րդ միջազգային ֆառատոնի շրջանակում, շնորհաբուն՝ Ռուլան Բիկովի անվան «Կինոյի և հեռուստատեսության զարգացման հայկական հիմնադրամ երեխաների և պատանիների համար» հիմնադրամը՝ «Անադոլու Քյուլթուր» թուրքական գործընկերոջ համագործակցությամբ, մոտավորապես 10 հայ և թուրք երիտասարդներ ընդգրկող ընտրված խմբի համար կկազմակերպի անիմացիոն արտադրության տեխնիկական և մշակույթը թեմայով սեմինար-դասընթաց: Որպես սեմինար-դասընթացի մի մաս՝ մասնակիցները համատեղ կնկարահանեն կարճամետրաժ ֆիլմ, որի առաջին ցուցադրությունը կկայանա Հայաստանում՝ փառատոնի փակման արարողության ընթացքում: Կազմակերպիչն նաև «կլոր սեղան» ձևաչափով քննարկում, որը կկենտրոնանա փառատոնի մասնակիցների միջև փորձի փոխանակման հարցերի շուրջ և կներկայացնի փառատոնի շրջանակներում Թուրքիայում իրականացված արվեստի և մշակույթի վերջին նախաձեռնությունները: Փառատոնի ընթացքում կցուցադրվեն նաև թուրքական արտադրության 4-5 ֆիլմեր՝ երեխաներին և երիտասարդներին առնչվող թեմատիկայով: Ակնկալվում է, որ ծրագրի արդյունքում փոխադարձ կապեր կստեղծվեն Հայաստանի և Թուրքիայի պատանիների, երիտասարդների, ինչպես նաև կինոարտադրողների միջև՝ նպաստելով անկախ ֆիլմերի նկարահանման նրանց հմտությունների բարելավմանը: Ծրագիրը և դրա հետագա գործունեությունը Թուրքիայում նույնպես կնպաստեն Հայաստանի և Թուրքիայի ներգրավված համայնքների շրջանում մյուս կողմի հումանիստական իմիջի ամրապնդմանը:

3. Կազմակերպություն՝ «Նարեկավանք Տուր» ՍՊԸ  
Ծրագրի անվանում՝ Հայ և թուրք ձեռնարկատերերի տեղեկատվական և աջակցության կենտրոն  
Ծրագրի ղեկավար՝ Արմեն Հովհաննիսյան  
Ընդհանուր բյուջեն՝ 19,950 ԱՄՆ դոլար  
Տևողություն՝ 2011թ. օգոստոսի 1 – 2012թ. մարտի 31 (8 ամիս)

Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի և արևելյան Թուրքիայի միջև առևտրի և բիզնեսի զարգացմանը՝ երկու երկրների նախապես ընտրված ոլորտներում գործարար հնարավորությունների ներուժի մասին հայ և թուրք գործարարների իրազեկվածության մակարդակը բարձրացնելու, ինչպես նաև հայ և թուրք գործարարների միջև բիզնես համագործակցության տնտեսապես իրագործելի մոդելները խթանելու միջոցով: Որպես

ծրագրի մաս՝ շնորհառուն՝ «Նարեկավանք Տուր» ՄՊԸ-ը, Երևանում կատեղծի տեղեկատվական և խորհրդատվական կենտրոն, որը «մեկ պատուհանի» սկզբունքով տեղեկատվություն կտրամադրի միմյանց հետ համագործակցելու գործում հետաքրքրված հայ և թուրք ձեռնարկատերերին: Կենտրոնը կտրամադրի հաճախորդների (ձեռնարկատերեր և ընկերություններ) կարիքներին համապատասխանեցված աջակցություն՝ երկու երկրների բիզնես համայնքների միջև գործարար համագործակցությունների հնարավորություններն ուսումնասիրելու միջոցով, ինչպես նաև կիրականացնի Հայաստանի և արևելյան Թուրքիայի թիրախային շրջանների (օրինակ՝ Կարս, Վան, Մուշ, Ադանա, Անթակիա, Էրզրում, Դիարբեքիր, ինչպես նաև Ստամբուլ) միջև տնտեսական հնարավորությունների նպատակային ուսումնասիրություն: Կենտրոնը կունենա նաև վեբ կայք, որտեղ կներկայացվեն տեղեկություններ ընկերությունների գործունեության, հայ և թուրք բիզնեսների միջև գործարար համագործակցության իրավական ասպեկտների մասին: Ակնկալվում է, որ ծրագրի արդյունքում կբարձրանա հայ և թուրք գործարանների միջև բիզնես հնարավորությունների մասին իրազեկվածության մակարդակը, որը կնպաստի անվստահության առկա մակարդակների կրճատմանը և կխթանի հարևան երկրի հետ բիզնես գործընկերություններ ստեղծելու երկու երկրների շահագրգիռ կողմերի պատրաստակամությունը:

4. Կազմակերպություն՝ «Անկախ լրագրողների ցանց» ՀԿ  
Ծրագրի անվանում՝ «ԱՎՏՈՒՄ» | Շարժական լրատվության ծրագիր  
Ծրագրի ղեկավար՝ Սոնյա Ապրեսովա  
Ընդհանուր բյուջեն՝ \$10,220 ԱՄՆ դոլար  
Տևողություն՝ 2011թ. օգոստոսի 1-ից մինչև հոկտեմբերի 31 (3 ամիս)

Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանի և Թուրքիայի հասարակությունների միմյանց մասին իրազեկ լինելու մակարդակի բարձրացմանը՝ փակ սահմանի արդյունքում ծագող սոցիալական բարդությունների ցուցադրման միջոցով: Որպես ծրագրի մի մաս՝ շնորհառուն՝ «Անկախ լրագրողների ցանց» ՀԿ-ը, կարձանագրի Երևան-Ստամբուլ 36-ժամյա ճամփորդության ընթացքում հայ միգրանտներին դիմակայող խնդիրները: Շնորհառու կազմակերպությունը կստեղծի բլոգ, որտեղ կներկայացվեն հետազոտվող հայ միգրանտների տեսակետները, տպավորություններն ու փորձը: Բլոգում տեղադրված նյութերը կհրապարակվեն նաև Ստամբուլում լույս տեսնող ԱԳՈՍ թերթում: Առավել լայն հանրային իրազեկում ապահովելու նպատակով՝ հավաքված նյութերի հիման վրա կնկարահանվի նաև վավերագրական ֆիլմ: Ֆիլմը կհեռարձակվի Թուրքիայի «IMC» և Հայաստանի «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությունների ալիքներով: Հայաստանում և Թուրքիայում շնորհառուն կկազմակերպի նաև խմբային կինոդիտումներ փոքր դահլիճներում՝ քաղաքացիական հասարակության, պետական ոլորտի, լրատվամիջոցների և փորձագետների համայնքները ներկայացնող շահագրգիռ փոքր խմբերի համար: Ակնկալվում է, որ ծրագրի արդյունքում կբարձրանա իրազեկվածության մակարդակը հասարակ մարդկանց և երկու երկրների շահագրգիռ խմբերի շրջանում՝ նրանց տեղեկացնելով այն դժվարությունների և մարտահրավերների մասին, որոնք դիմակայում են հայ միգրանտներին Թուրքիա կատարած ճամփորդության ընթացքում, ինչպես նաև կխթանի փակված սահմանի արդյունքում ծագող բարդությունների շուրջ հետագա հանրային քննարկումները:

5. Կազմակերպություն՝ «Ինքնագիր» գրական ակումբ  
Ծրագրի անվանում՝ հայախոս Համշեն մահմեդականներ

Ծրագրի ղեկավար՝ Վահան Իշխանյան  
Ընդհանուր բյուջեն՝ \$19,895 ԱՄՆ դոլար  
Տևողություն՝ 2011թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2012թ. մարտի 31 (6 ամիս<sup>1</sup>)

Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանի և Թուրքիայի հասարակությունների միջև մշակութային օտարացման աստիճանի մեղմացմանը՝ Թուրքիայում բնակվող մահմեդական Համշեն հայերի ինքնության և մշակութային հարցերը երկու երկրների լայն հանրությանը ներկայացնելու միջոցով՝ որպես եզակի էթնիկ միավորի օրինակ, որը պահպանելով հայկական ավանդույթներն ու լեզուն՝ դավանում է մահմեդականություն: Շնորհառուն՝ «Ինքնագիր» գրական ակումբը, համագործակցելով իր թուրք գործընկերոջ հետ՝ «Biryasam Kültür ve Ekoloji Derneği» («Մեկ կյանք» մշակութային և բնապահպանական միությունը), կկազմակերպի հետազոտական արշավ դեպի Հոպա բնակավայրի 2-3 գյուղեր, որտեղ հիմնականում բնակվում են Համշեն հայերը՝ այնտեղ Համշենների հետ հարցազրույցներ վերցնելու, նրանց սովորույթների, առօրյա կյանքի, լեզվի, թուրք հասարակությանն ինտեգրված լինելու աստիճանի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական և այլ խնդիրների մասին ֆոտո- և տեսանյութեր հավաքելու նպատակով: Որպես ծրագրի մաս՝ հավաքված տեղեկատվության հիման վրա կգրեն հոդվածներ՝ հայերեն և թուրքերեն լեզուներով, որոնք կհրատարակվեն Հայաստանի «tert.am» առցանց օրական և «168 zham» շաբաթական կայքերում: Շնորհառուն և նրա թուրք գործընկերը կմշակեն նաև թուրքական լրատվամիջոցներով ծրագրի նյութերի հաղորդումն ապահովելու ռազմավարություն: Նաև, հետազոտական արշավի արդյունքները կներկայացվեն Երևանի «Պեչա-քուչա» ձևաչափի երեկոյին (PechaKucha Night): Ի վերջո՝ նյութերը կհրատարակվեն հատուկ վեբ կայքում և կոմպակտ սկավառակներով (CD) կբաժանվեն ավելի լայն հանրությանը: Ակնկալվում է, որ ծրագրի արդյունքում Հայաստանի և Թուրքիայի բնակչության շրջանում կբարձրանա Թուրքիայում բնակվող Համշեն հայերի համայնքի կենսակերպի և մտահոգությունների մասին իրազեկվածության մակարդակը:

6. Կազմակերպություն՝ Շիրակի մրցունակության կենտրոն հիմնադրամ  
Ծրագրի անվանումը՝ Շիրակ ԷՔՄՊՈ 2011. կանայք որպես տնտեսական զարգացման առաջատարներ  
Ծրագրի ղեկավար՝ Գայանե Ավագյան  
Ընդհանուր բյուջեն՝ 18,987 ԱՄՆ դոլար  
Ծրագրի տևողությունը՝ 2011թ. նոյեմբերի 15 – 2012թ. փետրվարի 29 (3 ամիս)

Նպաստել Հայաստանի և Թուրքիայի միջև տնտեսական կապերի զարգացմանը՝ երկու երկրներում կանանց կողմից ղեկավարող բիզնեսների միջև համագործակցությանն աջակցելու միջոցով: Շնորհառուն՝ Շիրակի մրցունակության կենտրոն հիմնադրամը, կկազմակերպի տարեկան անցկացվող Շիրակ ԷՔՄՊՈ ցուցահանդեսը, որը կհյուրընկալի Թուրքիայի գործարար կանանց մի խումբ և կկենտրոնանա տնտեսական զարգացման գործում կանանց դերի վրա: 2011թ. նոյեմբերի 24-ից 25-ը Գյումրիում անցկացվող ԷՔՄՊՈ ցուցահանդեսին կմասնակցեն մոտ 50 հայ և 10 թուրք գործարար կանայք: Առաջին օրվա օրակարգը կներառի սննդամթերքի, շինանյութերի, տեքստիլ արդյունաբերության արտադրանքների և ծառայությունների ցուցահանդես: Միջոցառման երկրորդ օրվա ընթացքում մասնակիցները ֆորումի ձևաչափում կքննարկեն թեմաների լայն շրջանակ՝

<sup>1</sup> Ֆինանսավորումը տրամադրվում է 5 ամիս ժամկետով, սակայն ծրագրի ընդհանուր տևողությունը 6 ամիս է:

ներառյալ Հայաստանի և Թուրքիայի տնտեսության ընդհանուր նկարագիրը, կանանց դերը և ներգրավվածությունը բիզնեսում, ինչպես նաև Հայաստանում և Թուրքիայում արտադրության և ծառայությունների հատվածներում առկա ներդրումային ռիսկերն ու հնարավորությունները: Անկնալվում է, որ ծրագրի արդյունքում կստեղծվի գործարար կանանց ոչ պաշտոնական տարածաշրջանային ցանց, ինչպես նաև հիմք կդրվի երկու երկրներում կանանց կողմից ղեկավարվող բիզնեսների միջև համատեղ գործարար ծրագրերի մշակման համար:

7. Կազմակերպություն՝ «Քաղաքացիական ֆորում» ՀԿ  
Ծրագրի անվանումը՝ Շրջակա միջավայրի կայուն զարգացմանը նվիրված սեմինար ճարտարապետության և քաղաքաշինության բնագավառների թուրք և հայ երիտասարդ ուսանողների / մասնագետների համար  
Ծրագրի ղեկավար՝ Մարինե Մանուչարյան  
Ընդհանուր բյուջեն՝ 19,978 ԱՄՆ դոլար  
Ծրագրի տևողությունը՝ 2011թ. դեկտեմբերի 1 –2012թ. փետրվարի 29 (3 ամիս)

Նպաստել Հայաստանի և Թուրքիայի ակադեմիական և մասնագիտական շրջանակներում հաղորդակցման, ցանցային աշխատանքների և փորձի փոխանակման խթանմանը՝ շրջակա միջավայրի կայուն զարգացմանը նպաստող ճարտարապետական և քաղաքաշինության լուծումներով և նախագծերով հետաքրքրված երկու երկրների ուսանողների, երիտասարդ մասնագետների և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների միջև ցանցերի ստեղծման միջոցով: Շնորհառուն՝ «Քաղաքացիական ֆորում» ՀԿ-ն՝ Թուրքիայի «Յիդիզ» տեխնիկական համալսարանի հետ համատեղ, կկազմակերպեն կառուցապատվող տարածքներում շրջակա միջավայրի կայուն պահպանության հետ կապված մարտահրավերները թեմայով սեմինար: Ստաբուլում նախատեսվող հնգօրյա սեմինարին կմասնակցեն էներգիայի օգտագործման արդյունավետության ոլորտի 20 երիտասարդ մասնագետներ: Էներգաարդյունավետ ճարտարապետության հարցերի շուրջ ելույթներով հանդես կգան հրավիրված փորձագետներ Հայաստանից և Թուրքիայից: Սեմինարը կնպաստի երիտասարդ մասնագետների միջև ցանցային աշխատանքների, գիտելիքների և փորձի փոխանակմանը, ինչպես նաև նրանց միջև համագործակցության խթանմանը՝ համատեղ ծրագրերի մշակման միջոցով: Մասնակիցները հնարավորություն կունենան այցելելու ընկերություններ և էներգետիկ խնդիրներով զբաղվող գիտահետազոտական կենտրոններ՝ համատեղ ծրագրերին առնչվող խնդիրներ և գաղափարներ բացահայտելու նպատակով: Որպես սեմինարի մի մաս՝ նախատեսվում է նաև հրապարակել համահեղինակային հոդվածներ և էլեկտրոնային բյուլետեններ, ինչպես նաև կազմակերպել հրապարակային շնորհանդեսներ Հայաստանի և Թուրքիայի համապատասխան ԲՈՒՀ-երում և ճարտարապետների մասնագիտական միություններում: Մասնակիցների միջև ստեղծված կապերը և հաղորդակցությունն այնուհետև կընդլայնվի առցանց ֆորում ձևաչափով, որի խնդիրը կլինի պահպանել, զարգացնել և ընդլայնել սեմինարի ընթացքում նախաձեռնված քննարկման շրջանակը: Անկալվում է, որ ծրագրի արդյունքում կստեղծվի շրջակա միջավայրի կայուն զարգացման և կառուցապատվող տարածքներում բնական միջավայրի պահպանության հարցերով հետաքրքրված երկու երկրների մասնագետների համագործակցության ոչ պաշտոնական ցանց:

8. Կազմակերպություն՝ «Կանանց ֆորում» ՀԿ

Ծրագրի անվանումը՝ «Հայաստան-Թուրքիա համագործակցությանն աջակցող գործարար կանայք»

Ծրագրի ղեկավար՝ Լիլիթ Ավետիսյան

Ընդհանուր բյուջե՝ 17 000 ԱՄՆ դոլար

Տևողությունը՝ 2012 թ. մայիսի 1-ից օգոստոսի 31-ը (4 ամիս)

Նպաստել Հայաստանի և Թուրքիայի միջև տնտեսական կապերի զարգացմանը՝ սատարելով անդրսահմանային համագործակցությունը երկու երկրներում կանանց կողմից ղեկավարվող ձեռնարկությունների միջև: Որպես դրամաշնորհ ստացող կազմակերպություն հանդես եկող «Կանանց ֆորում» ՀԿ-ն, Թուրքիայում իր գործընկեր «DOGUNKAD» ասոցիացիայի հետ համատեղ, պատրաստվում է հարթակ ստեղծել հարևան երկրի հետ համագործակցությամբ հետաքրքրված կին գործարարների, ինչպես նաև Հայաստանում և Թուրքիայում կանանց կողմից ղեկավարվող ձեռնարկությունների համար: 2012 թվականի հուլիսին տասներկու հայ և թուրք գործարար կանայք կմասնակցեն Թուրքիայում կայանալիք միջձեռնարկատիրական եռօրյա հանդիպմանը՝ համագործակցության իրատեսական հնարավորություններն ուսումնասիրելու նպատակով: Ակնկալվում է, որ միջձեռնարկատիրական այս միջոցառման արդյունքում կկնքվի առնվազն երկու բիզնես համաձայնագիր: Հայաստանում և Թուրքիայում ծրագրի թիմերի կողմից հավաքագրված տեղեկությունները կմուտքագրվեն Հայ և թուրք գործարարների տեղեկատվական և խորհրդատվական կենտրոնի կողմից պահպանվող բիզնես կապերի տվյալների բազայում: Ծրագրի արդյունք կդառնա գործարար կանանց համար նախատեսված տարածաշրջանային ոչ պաշտոնական ցանցի ստեղծումը, ինչպես նաև հիմքերի ձևավորումը Հայաստանում և Թուրքիայում կանանց ղեկավարությամբ գործող ձեռնարկությունների միջև համատեղ բիզնես ծրագրերի զարգացման համար:

9. Կազմակերպություն՝ 21-րդ դարի առաջնորդների ֆորում  
Ծրագրի անվանումը՝ «Կայուն լուծումներ՝ հայ և թուրք երիտասարդ  
բնապահպանների աշխատանքային հանդիպում»  
Ծրագրի ղեկավար՝ Գայանե Մարգարյան  
Ընդհանուր բյուջե՝ 12 000 ԱՄՆ դոլար  
Տևողությունը՝ 2012 թ. մայիսի 1-ից հուլիսի 31-ը (3 ամիս)

Նպաստել Հայաստանի և Թուրքիայի միջև ընդհանուր բնապահպանական խնդիրների լուծման շուրջ ավելի ակտիվ երկխոսությանը՝ համապատասխան դաշտի ստեղծման միջոցով ընդլայնելով համագործակցությունը երկու երկրների երիտասարդ բնապահպանների և բնապահպանական հարցերով զբաղվող ՀԿ-ների միջև: Գիտակցելով տարածաշրջանում բնապահպանական սպառնալիքների աճով պայմանավորված ընդհանուր ռիսկերը՝ Հայաստանում գործող «21-րդ դարի առաջնորդների ֆորում» ՀԿ-ն, Թուրքիայում իր գործընկեր «Երկիր մուրակ ասոցիացիա»-ի հետ համատեղ, 2012 թվականի մայիսին կկազմակերպի Երևանում եռօրյա սեմինար, որին կմասնակցեն Թուրքիայում և Հայաստանում գործող յոթ տարբեր քաղաքացիական նախաձեռնություններ և կազմակերպություններ ներկայացնող 14 երիտասարդ բնապահպաններ: Մասնակիցները կքննարկեն ընդհանուր բնապահպանական խնդիրների լուծմանն ուղղված կայուն հաղորդակցության և համագործակցության հեռանկարները և կմշակեն համատեղ քաղաքականության ամփոփագիր, որը կներկայացվի և կտարածվի ազգային և միջազգային մակարդակներով՝ հիմնական շեշտը դնելով Ռիո+20-ի, ասել է թե՛ 2012 թ. հունիսի 20-ից 22-ը Բրազիլիայի Ռիո դե Ժանեյրո քաղաքում կայանալիք ՄԱԿ-ի կայուն զարգացմանը նվիրված համաժողովի վրա: Սեմինարը կբարձրացնի Հայաստանի և Թուրքիայի երիտասարդ բնապահպանների՝ ընդհանուր բնապահպանական խնդիրներին և սպառնալիքներին

արձագանքելու համար անհրաժեշտ կարողությունները, ինչպես նաև կնպաստի Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների բարելավման գործընթացին՝ հաստատելով բնապահպանական գործունեության ոլորտում երկարաժամկետ համագործակցություն:

10. Անհատ՝ Խաչատուր Դադայան

Ծրագրի անվանումը՝ «Հայկակական առևտրային և տնտեսական ներկայությունը 15-րդ դարից մինչև 1915թ.: Փաստերի գիրք»

Ընդհանուր բյուջե՝ 17 000 ԱՄՆ դոլար

Տևողությունը՝ 2012 թ. ապրիլի 1-ից օգոստոսի 1-ը (3 ամիս)

Հայախոս և թուրքախոս լսարանին ներկայացնել հայերի և թուրքերի տնտեսական համագործակցության ընդհանուր պատմությունը: Գրող Խաչատուր Դադայանը առաջարկեց հայերեն և թուրքերեն լեզուներով տպագրել մի գիրք «Հայկակական առևտրային և տնտեսական ներկայությունը 15-րդ դարից մինչև 1915թ.: Փաստերի գիրք» վերնագրով: Գիրքը կանդրադառնա ժամանակակից Թուրքիայի տարածքում հայերի առևտրային և տնտեսական ներկայությանը 15-րդ դարից մինչև 1915թ. ընկած ժամանակահատվածում: Գիրքը հիմնված կլինի Հայաստանի և Թուրքիայի արխիվներից, Մատենադարանից և այլ աղբյուրներից հավաքագրված փաստերի հիման վրա: Գրքում կներկայացվի այն հսկայական ներդրումը, որը հայերն ունեցել են Թուրքիայի տնտեսական զարգացման մեջ:

11. Անհատ՝ դոկտոր Հասմիկ Ստեփանյան

Ծրագրի անվանումը՝ «Հայերի դերը Օսմանյան Կայսրությունում»

Ընդհանուր բյուջե՝ 13 600 ԱՄՆ դոլար

Տևողությունը՝ 2011 թ. սեպտեմբերի 15-ից 2012թ. սեպտեմբերի 15-ը (12 ամիս)

Հայախոս և թուրքախոս լսարանին ներկայացնել ընդհանուր պատմությունը և հայերի դերը Օսմանյան կայսրությունում: Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի գիտնական Հասմիկ Ստեփանյանը առաջարկեց թուրքերեն թարգմանել իր՝ «Հայերի դերը Օսմանյան Կայսրությունում» գիրքը, որը նվիրված էր Ստամբուլի հայոց պատրիարքարանի 50-ամյակին: Որպես ծրագրի արդյունք՝ պրոֆ. Ստեփանյանը կներկայացնի գրքի թուրքերեն թարգմանությունը: Միևնույն ժամանակ հեղինակը Հայաստանի և Թուրքիայի տպագրական ընկերությունների հետ կքննարկի գրքի տպագրման հնարավորությունը: